Տ. ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Ս. ՎԱՐԴԱՆ ԵՒ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՏՈՒՌ-ՄԿՐՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 27-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(27 հունվարի 2019 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Արթո՛ւն կացեք… (Մարկ. ԺԴ. 38),
եւ պատրա՛ստ եղեք, որովհետեւ
այն ժամին, երբ չեք սպասի,
կգա մարդու Որդին (Ղուկ. ԺԲ. 40)»:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ ի Քրիստոս,

Տերը մեզ մշտապես արթնության կոչ է ուղղում, հորդորում զգոն լինել եւ սթափ՝ առավել եւս մեր կյանքի կարեւոր ու պատասխանատու պահերին։ Արթուն լինելը հաճախ հոմանիշ է ապրելուն ու գործելուն, որովհետեւ քնած վիճակում կամ թմբիրի մեջ գտնվելիս կյանքն ուղղակի հոսում, անցնում է մեր կողքով։

Արթո՛ւն եւ պատրա՛ստ լինելու կոչը միշտ պիտի զնգա մեր ականջներում, որովհետեւ քրիստոնյան, առավել եւս հա՛յ քրիստոնյան, ո՛չ մարմնավոր եւ ո՛չ էլ հոգեւոր առումով թմրելու, սթափությունը կորցնելու իրավունք չունի։ Կոչն առաջին իմաստով, բնականաբար, վերաբերում է Տիրոջ Գալստյան օրը Փրկչին դիմավորելու համար պատրաստ լինելուն։ Հիսուս Քրիստոսի խրատները հանձնարարում են արթնությա՛մբ ու հավատարմորե՛ն սպասել Մարդու Որդու գալստյանը, որովհետեւ այդ գալուստն անակնկալ է եւ պայմանաժամով որոշված չէ. «Այդ օրվա ու ժամի մասին ոչ ոք չգիտե՝ ո՛չ հրեշտակները երկնքում եւ ո՛չ էլ Որդին, այլ միայն Հայրը» (Մարկ. ԺԳ. 32)։ Ով գալստյան պահին պատրաստ չլինի, կձախողվի, կվնասվի ու կպատժվի։ Այդ ժամին արթուն ու Տիրոջը դիմավորելուն պատրաստ ծառան է միայն, որ արժանանալու է գովեստի ու երանության, ինչպես նաեւ՝ Տիրոջ իսկ ձեռքով պատիվներ ընդունելու՝ «Երանի՛ այն ծառաներին, որոնց արթուն կգտնի տերը, երբ գա» (Ղուկ. ԺԲ. 37)։

Երկրորդ իմաստով կոչը պատշաճ է առօրյա մեր կյանքին, մեր ծառայությանը. ապրելով նենգ թշնամիների հարեւանությամբ՝ զգոնությունը թուլացնելու, թմրելու ու ննջելու իրավունք պարզապես չունենք, այլապես անխուսափելի կորուստներ կունենանք։

Սակայն ինչպես որ չարը՝ սատանան է փորձում քրիստոնյա մարդու զգոնությունը թուլացնել, ուշադրությունը շեղել՝ փրկության գերխնդրից շեղելու համար, այդպես էլ մեր մարմնավոր թշնամին է փորձում մեր ընդհանուր, այդ թվում՝ բանակի ուշադրությունը շեղել եւ մեր արթնությունը չեզոքացնել զանազան ճանապարհներով ու ստոր միջոցներով։ Հետեւաբար այս կոչն արդիական է բազմապատիկ չափով եւ միշտ հնչում է այսպես. «Արթո՛ւն կացեք (Մարկ. ԺԴ. 38) եւ պատրա՛ստ եղեք, որովհետեւ չգիտեք, թե թշնամին որ ժամին կգա»։

Արթնության եւ թշնամուն դիմագրավելու այս կոչը երեք մակարդակ ունի՝ անհատական, ընտանեկան ու պետական, եւ այս մակարդակներից եւ ոչ մեկում ծուլությունն ու թմբիրը, ինչպես նաեւ «ութերորդ մահացու մեղք» անտարբերությունը, «այս խնդիրն ինձ չի վերաբերում»ը տեղ չունեն. դրանք ուղղակի անթույլատրելի են։

Անհատական պատրաստության ու զգոնության լավագույն օրինակներից մեկը հենց զինվորականի կերպարն է՝ անկախ աստիճանից։ Ծառայության ողջ ընթացքում զինվորի գոտին կապված է, որ խորհրդանշում է ամեն վայրկյան թշնամուն դիմագրավելու եւ մարտի նետվելու նրա պատրաստակամությունը։ Այդ պահը հեռու է թե մոտ՝ ոչ ոք չգիտի։ Ով ժամը գիտի, կարող է անհրաժեշտ պահին հսկել, իսկ ով չգիտի, ամեն ժամ պիտի հսկի։ Մեր դեպքում երկրորդն է, ուստի հայ զինվորն ու զորականը զօրուգիշեր են հսկում եւ պատվով կատարում իրենց ծառայողական պարտականությունները՝ իրենց զրկելով բաղձալի հանգստի նույնիսկ կարճատեւ պահերից։ Գոտին մեջքին կապած ու ճրագը վառած (հմմտ. Ղուկ. ԺԲ. 35) սպասելը, ավետարանական պատմության նմանությամբ, նշանակում է հանգստի չտրվել, որովհետեւ երբ ցկյանս ծառայության ժամկետը լրանա, այն ժամանակ միայն ծառաները, մեր դեպքում՝ զինվորն ու զորականը, կարող են գոտիներն արձակել, ճրագները մարել ու գիշերային հանգիստը վայելել։

Գաղտնիք չէ, որ մենք բանակ-ժողովուրդ ենք, բանակ՝ նորածնից մինչեւ ալեհեր ծերունի, իսկ այդպիսին լինել մեզ պարտադրել է պատմական մեր բարդ ճանապարհը, ուստի վերը նկարագրված ձեւով

ուղղակի պարտավոր ենք միշտ արթուն հսկել՝ բոլորով զինվոր դարձած՝ երբեք գոտիներս չթուլացնելով։ Այդպիսի զգաստության ու արթնության պահերը ազգի լինել-չլինելու օրերին ակնհայտ ու անուրանալի արդյունք են տվել, ուստի եւ իբրեւ հավիտենական օրինակ մեր աչքի առջեւից չպիտի հեռացնենք։

Սիրելինե՛ր, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից 2019 թ. հռչակվել է ընտանիքի տարի, որտեղ կրթվում եւ դաստիարակվում է Աստծուն եւ ազգին նվիրված քաղաքացին։ Վեհափառ Հայրապետի խոսքով՝ «Ընտանիքում է սնուցվում հոգեւոր-բարոյական արժեքները, բարին ընտրելու աներկյուղ ոգին։ Ընտանիքում մատուցված օրինակով կրթվում են միմյանց հանդեպ սերը, վստահությունը եւ հոգատարությունը։ Արդ, նախանձախնդիր մնանք նվիրականությանն ու ամրությանը ընտանիքի։ Անխաթար պահպանենք աստվածահաստատ ընտանիք հասկացությունը, նրա սրբությունը, ազգային ավանդույթները, խնամենք ու բարձրացնենք մեր հոգեւոր ու ազգային կյանքը եւ մնանք մշտապես Տիրոջ որդեգրության շնորհի մեջ՝ որպես հավատավոր մեկ ընտանիք, որպես Աստծու սեփական ժողովուրդ»։

Բանակը պետության եւ ընտանիքի միջին օղակն է։ Բանակն էլ ընտանիք է, եւ հայ ժողովուրդը՝ մի կուռ բանակ, ուր ցանկացած պաշտոնյա զգոնության ու զգաստության բազմապատիկ չափաբաժին ունի, որովհետեւ թերացումների համար պատասխանատու է սերունդների ու անաչառ Աստծու առաջ. «Ում շատ է տրված, նրանից շատ էլ կուզվի, եւ ում շատ է վստահված, նրանից ավելին կպահանջեն» (Ղուկ. ԺԲ. 48),– ասում է մեր Տերը Ղուկասի ավետարանում։

Որեւէ հարցի անդրադառնալիս կամ քննելիս մեր Տերը խնդիրը վեր հանելով չի սահմանափակվում, այլ անպայմանորեն տալիս է դրա լուծման ճանապարհը, շատ հաճախ՝ իր օրինակով, իր կյանքով ցույց տալով իր թելադրանքի գործնականությունը։ Արթնություն պահելու, զգոն ու սթափ մնալու հարցում Տեր Հիսուսը առաջին տեղում դնում է աղոթքը։ Աղոթքն է ամենամեծ խթանն ու հիմքը արթնության, որովհետեւ լինելով մեր Արարչի հետ զրուցելու, մեր սիրտը նրան բացելու ճանապարհ՝ այդ պատասխանատու պահին անհնար է թմրել։ Նաեւ միշտ հաճելի է այդ զրույցը մեր երկնավոր Հոր հետ, որն անհնար է թողնել ու փոխարինել քնով ու թմբիրով։ Իզուր չէ, որ Գեթսեմանիի պարտեզում ամենածանր, բեկումնային պահին Տեր Հիսուս Քրիստոս աղոթում էր՝ ուժ ստանալով

երկնքից երեւացող մի հրեշտակից (հմմտ. Ղուկ. ԻԲ. 43)։ Այդ պահին իր հետ եղող ամենասիրելի աշակերտներին էլ պատվիրում էր իր հետ նույնն անել՝ արթուն մնալ ու աղոթել, նաեւ նախատում՝ այդպես չվարվողներին, ասելով. «Ինչո՞ւ եք քնել. վե՛ր կացեք, աղոթեցե՛ք, որպեսզի փորձության մեջ չընկնեք» (Ղուկ. ԻԲ. 46)։

Աղոթքը մտքին պարզություն ու զորություն է հաղորդում՝ մղելով միակ ճիշտ որոշումը կայացնելու, որ շիտակ լինելուց զատ՝ անպայմանորեն նաեւ աստվածահաճո է։ Ավետարանը հաճախ է նշում, որ Տեր Հիսուսը ամբողջ գիշեր արթուն աղոթել է (Ղուկ. Զ. 12, հմմտ. Մատթ. ԺԴ. 23, Մարկ. Բ. 35, Զ. 46-47 եւ այլն), եւ այս պահերին հաջորդել են նրա ամենակարեւոր քայլերը։ Իսկ հակառակ կեցվածքը՝ հոգեւոր թմբիրն ու քունը, անխուսափելի փորձության առաջ են կանգնեցնում։ Սատանան հափշտակում է նրան, ով քնած է, ով ննջում է թմբիրի մեջ՝ մի կողմ թողած արթնությունն ու զգոնությունը եւ աղոթքի շնորհած պաշտպանությունը։

Բանակն արթուն, աղոթքի մեջ ու Տիրոջ օրհնության ներքո պահելու ձգտումով է, որ պաշտոնապես արդեն ավելի քան քսան տարի հայ հոգեւորականը զինված ուժերում է՝ իր ամենօրյա ու անսակարկ ծառայությամբ նեցուկ լինելու զինվորին ու սպային եւ զգոն պահելու հոգեւոր ու մարմնավոր թշնամու հարձակման վտանգի առաջ. այսօր զորամասերում դժվարությամբ են պատկերացնում առօրյան առանց իրենց գնդերեցի, նրա աղոթքի ու օրհնության, նրա խոսքի ու Աստվածաշնչից բխող խրատների։ Պետականություն ու բանակ ունեցած ժամանակներում Հայ Եկեղեցին իր մշտական հոգեւոր խնամքի ներքո է պահել հայրենյաց պաշտպան զորականին՝ հատկապես մարտի դաշտում մշտապես կանգնած լինելով նրա կողքին։

Դրա վառ վկայություններից մեկն էլ մեր զինվորի պահանջներից բխող ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության ծրագրերից եւս մեկի կյանքի կոչվելն է. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ ՀՀ Պաշտպանության նախարար, մեծարգո Տիար Դավիթ Տոնոյանի հրամանով ՀՀ զինված ուժերի զինծառայողներն իրենց համազգեստին կկրեն «Աշոտ Երկաթ խաչ» կրծքանշանը՝ իբրեւ Տիրոջով հաղթելու եւ երեւելի ու աներեւույթ թշնամուց պաշտպանվելու հզորագույն նշան։ Տերունական Ս. Նշանն ունենանք մեր կրծքին եւ «խաչով ու սրով» գծենք ապրելու մեր իրավունքի սահմանները։

Վերադառնալով օրվա խորհրդին՝ շնորհավորում ենք Հայոց բանակի կազմավորման տարեդարձի կապակցությամբ՝ մաղթելով, որ ըստ մեր Տիրոջ խոսքի մշտապես արթուն լինենք՝ դիմագրավելու թշնամու անակնկալ ոտնձգությունները մեր համարժեք գործերով ու քայլերով, գոտեպնդված մարմնավոր ու հոգեւոր սպառազինությամբ, նաեւ արժանիորեն դիմավորելու համար մեր Տիրոջը՝ զորացած աղոթքով, որ ամենաազդու եւ մշտանոր միջոցն է անհատ հայ քրիստոնյայի ու մեր ամբողջ ազգի ու բանակի համար։

Եւ թող ամենազոր Տերն ինքը զորացնի յուրաքանչյուրիս այդ ճանապարհին. այժմ եւ հավիտյանս. ամեն։